Հավելված N 2
2026 թվականի հունվարի «23»-ին կնքված
«1032-11002/2026-ՀԿԳՏ10» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գավառ) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2026- ՀԿԳՏ10» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026 - 31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.26 – 30.06.26 |
| Ներկայացման օր | 09.07.2026 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| Ծրագրով նախատեսված և հաշվետու ժամանակաշրջանին համապատասխանող հիմնական գործողություններն են՝ |

1) Խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցում:
2) Խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝

✓ Կենցաղային սպասարկում.

✓ Բժշկական օգնություն և սպասարկում

✓ Սոցիալ-հոգեբանական օգնություն: Միջոցառումների կազմակերպում՝ շահառուների հասարակական կյանքը ակտիվացնելու նպատակով

✓ Խորհրդատվական օգնություն: Սոցիալական աշխատողի կողմից շահառուներին սոցիալական խորհրդատվություն/շահերի պաշտպանություն, միջնորդում, ուղղորդում այլ կառույցներ և այլն/ տրամադրում:

3) Սննդի, հիգիենիկ պարագաների և դեղորայքի տրամադրում: Կազմակերպությունը հնարավորության սահմաններում շահառուներին տրամադրում է սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթ, ինչպես նաև առաջին անհրաժեշտ դեղորայք:
4) Ծրագրի տեսանելիության ապահովում՝ տեսանյութերի, ծրագրում ընդգրկված շահառուների կյանքի պատմությունների, ինֆոգրաֆիկաների, լուսանկարների և տեսանելիությունն ապահովող այլ նյութերի միջոցով ծրագրի տեսանելիության ապահովում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայություններ են մատուցվել 25 շահառուի՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի:

Սոցիալական աշխատողի կողմից կատարվել են տնայցեր՝ յուրաքանչյուր շահառուի այցելել է ամսական երկու անգամ:

Բոլոր շահառուներին տրամադրվել են կենցաղային սպասարկման ծառայություններ (անձնական հիգիենայի ապահովում, տան մաքրում, սննդի կազմակերպում, գնումներ, կոմունալ վճարումներ և այլն), որոնք իրականացվել են շաբաթվա հինգ օրերին՝ ըստ նախապես կազմված գրաֆիկների: Այցերը փաստագրվել են համապատասխան ձևաթղթերում: Շաբաթ և կիրակի օրերին Ա խմբի շահառուներին աջակցություն է ցուցաբերվել կամավորի կողմից:

Բուժքույրերը իրականացրել են պարբերական տնայցեր՝ Ա խմբի շահառուներին շաբաթական երկու, իսկ Բ խմբի շահառուներին՝ մեկ անգամ: Տրամադրվել են բուժքույրական ծառայություններ՝ ներառյալ ներարկումներ, դեղերի տրամադրում, առողջական ցուցանիշների չափում, վերքերի մշակում, ինչպես նաև խորհրդատվություն և ուղեկցում բժշկական հաստատություններ:

Բացի այդ, շահառուներին և նրանց խնամողներին տրամադրվել է առողջապահական կրթություն՝ առողջ ապրելակերպի, հիգիենայի և հիվանդությունների կանխարգելման թեմաներով: Մայիս ամսին շահառուներին տրամադրվել է առաջին անհրաժեշտության դեղորայք:

*Ծրագրի շրջանակներում տրամադրված կենցաղային և խնամքի ծառայությունների արդյունքում բարելավվել է շահառուների անձնական հիգիենայի և բնակարանային պայմանների վիճակը: Հիգիենայի պահպանման և շարունակական խնամքի շնորհիվ շահառուները դարձել են ավելի ինքնավստահ և ապահովված: Գնումների կազմակերպումն ու կոմունալ վճարների իրականացումը նպաստել են նրանց սոցիալական կայունության և անվտանգության զգացման բարձրացմանը: Ընդհանուր առմամբ, խնամքի ծառայությունների հետևողական տրամադրումը հանգեցրել է շահառուների կյանքի որակի բարելավմանը:*

*Միաժամանակ, կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների մատուցման, անհրաժեշտ դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի մշտական վերահսկողության արդյունքում պահպանվել և բարելավվել է շահառուների առողջական վիճակը:*

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից շահառուներին տրամադրվել են շարունակական սոցիալական խորհրդատվություն և տեղեկատվություն՝ ուղղված նրանց իրավունքների և շահերի պաշտպանության բարձրացմանը: Քննարկվել են շահառուներին հուզող հիմնախնդիրները, ներկայացվել են հնարավոր լուծումներ և աջակցության տարբերակներ՝ նպաստելով նրանց տեղեկացվածության և իրազեկվածության աճին:

Սոցիալական աշխատողի միջամտությամբ և ՄՍԾ հետ համագործակցությամբ կարգավորվել է երկու շահառուների սոցիալական նպաստների հարցը: Լուծվել է մեկ շահառուի խմելու ջրի վարձավճարի հետ կապված խնդիրը:

*Շահառուների սոցիալական խնդիրները համակարգված կերպով լուծվել են՝ համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվության, միջնորդական աջակցության և անհրաժեշտության դեպքում անմիջական օգնության միջոցով: Արդյունքում, շահառուները դարձել են ավելի տեղեկացված, ինքնուրույն և պատրաստ՝ պաշտպանելու իրենց իրավունքներն ու շահերը՝ ակտիվորեն ներգրավվելով իրենց խնդիրների լուծման գործընթացում:*

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրային թիմի կողմից կազմակերպվել և անցկացվել է երկու միջոցառում :

Հունիսի 11-ին կազմակերպվել է ճանաչողական էքսկուրսիա Լճաշեն գյուղում գործող «Sofi Textile» բուրդ վերամշակող ընկերություն, որտեղ հյուրընկալող կողմը կազմակերպվել է հյուրասիրություն և յուրաքանչյուր շահառուին նվիրել մեկական բարձ:

Էքսկուրսիային մասնակցել են ծրագրի ութ շահառուներ, որոնց համար այն և ուսուցողական էր ,և լավ առիթ էր հանրության հետ շփման համար: Միջոցառումն անցել է ջերմ և մտերմիկ մթնոլորտում՝ ապահովելով շահառուների սոցիալական ակտիվությունն ու հաղորդակցությունը:

Հունիսի 16-ին ծրագրային թիմը այցելել է Ռիմա տատիկին՝ շնորհավորելու նրա 90-ամյակը: Նրան հանձնվեց նվերներ՝ մաղթելով քաջ առողջություն և երկարակեցություն:

Ծրագրում ընդգրկված բոլոր շահառուներին մատուցվել են լվացքի ծառայություններ՝ ապահովելով նրանց կենցաղային պայմանների բարելավումը: 11 շահառուի անկողնային պարագաներն ու հագուստը տեղափոխվել են գրասենյակում գտնվող լվացքատուն, որտեղ դրանք լվացվել, արդուկվել և այնուհետ վերադարձվել են շահառուների բնակարաններ: Մնացած 14 շահառուների դեպքում լվացքը կազմակերպվել է անմիջապես նրանց տներում՝ հաշվի առնելով անհատական կարիքներն ու հնարավորությունները:

*Լվացքի և լոգանքի ծառայությունների համակարգված կազմակերպման արդյունքում էականորեն բարելավվել է շահառուների հիգիենիկ վիճակը և ընդհանուր բարեկեցությունը:*

Բուժքույրերի կողմից մայիս ամսին շահառուներին տրամադրվել է առաջին անհրաժեշտության դեղորայք: Դեղորայքի տրամադրումն իրականացվել է բացառապես բժշկի նշանակմամբ՝ ապահովելով բուժման գործընթացի անվտանգությունն ու արդյունավետությունը: Բացի այդ, բուժքույրերը լիազորված են եղել շահառուների փոխարեն պոլիկլինիկաներից ստանալ նրանց հասանելի դեղամիջոցները՝ նպաստելով ծառայությունների հասանելիության բարձրացմանը:

Հունիս ամսին ծրագրում ընդգրկված բոլոր 24 շահառուներին տրամադրվել են սննդի փաթեթներ և հիգիենիկ պարագաներ: Սննդի փաթեթները կազմվել են՝ ներառելով անհրաժեշտ կալորիականությամբ և սննդարար արժեք ունեցող մթերքներ՝ ուղղված շահառուների առողջության պահպանմանը: Սննդի և հիգիենիկ պարագաների բաշխումն իրականացվել է կամավորների և սոցիալական խնամողների համատեղ աշխատանքի շնորհիվ՝ ապահովելով գործընթացի արդյունավետ և կազմակերպված իրականացումը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիապրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են գրասենյակում: https://www.facebook.com/share/r/1ExdnmwM1C/?mibextid=wwXIfr https://www.facebook.com/share/p/1BCLxTqp4j/?mibextid=wwXIfr |

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում էական խնդիրներ կամ խոչընդոտներ չեն եղել: |

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

| |
|---|
| Հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները՝<br><br>Կարիքների վերագնահատում, փոփոխությունների գրանցում անհատական սոցիալական ծրագրերում, խնամքի ծառայությունների տրամադրում, մասնավորապես՝<br>1) կենցաղային սպասարկում<br>2) բժշկական օգնություն և սպասարկում<br>3) սոցիալ-հոգեբանական օգնություն<br>4) խորհրդատվություն<br>Սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում:<br>Ծրագրի տեսանելիության ապահովում |

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Ք. Երևան, կառավարական տուն 3<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՎՀՀ -01506515<br>Գլխավոր քարտուղար՝ | Հայկական Կարիտաս ԲՀԿ<br>Ք. Գյումրի, փ. Հ. Սարգսյան, նրբ. 3, տ. 8<br>ՀՎՀՀ - 05514397<br><br>Նախագահ՝ Ճորճ Միշելի Տնկայէ<br>Գևորգ Արք. Նորատունկեան |
| ---------------------------------------------<br>(ստորագրություն) | ---------------------------------------------<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | **Շահառուների թվաքանակը հաշվետու ժամանակահատվածի սկզբում/վերջում** | 24/25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 25/24 |
| 2. | **Հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը** | 12 |
| 2.1 | այդ թվում՝ կին | 12 |
| 2.2. | այդ թվում 18-65տարեկան | 1 |
| 2.2.1 | այդ թվում՝կին | 1 |
| 2.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 2.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 2.3 | 65 տարեկանից բարձր | 10 |
| 3. | **Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ)** | Ա –3<br>Բ – 22 |
| 4. | **Կենցաղային սպասարկում.** | 25 |
| 5. | **Բժշկական օգնություն և սպասարկում.** | 25 |
| 6. | **Սոցիալ-հոգեբանական օգնություն** | 25 |
| 6.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 1 |
| 6. | **Խորհրդատվական օգնություն** | 25 |
| 7. | **այլ ծառայություններ (*նշել*)**<br>լվացքի ծառայություն<br><br>սննդի տրամադրում | <br>11 շահառուի հագուստների լվացումը իրականացվել է Կարիտասի լվացքատանը, մնացածինը՝ իրենց տներում |

| | | |
|---|---|---|
| | հիգիենիկ միջոցների տրամադրում | 1 անգամ 24 շահառուի |
| | դեղորայքի տրամադրում | 1 անգամ 24 շահառուի |
| | | 1 անգամ 24 շահառուի |